ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-23-9/10-9 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 02.08.2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ՝ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Բ. Թադևոսյանի, ով գործում է «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲ ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 16.05.2023 թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-23-9/10-9 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.1 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելվածներ № 1-ի և №2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված № 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

**2. Գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 53,760 (հիսուներեք հազար յոթ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, համապատասխան եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ, քան 11.12.2023թ.:

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի № 1 և №2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ ապրանքների ձեռքբերման պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ կառուցվածքային ստորաբաժանում՝ ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Կոնցեռ-Էներգոմաշ» ՓԲԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ, ք. Երևան, Ազատության 26/8 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144129 | Հ/Հ 217002182558001 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 01210095 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | տնօրեն |
| Կ. ԲՐՈՒՏՅԱՆ | Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-23-9/10-9 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/հ | CPV կոդը | CPV անվանումը | անվանումը | Չ/Մ | Քանակ | միավորի գինը (ՀՀ դրամ) | գումարը (ՀՀ դրամ) | Մատակարարումը՝ ոչ ուշ քան 05.12.2023թ. |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 16 | 33691420/257 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ | Հակաբիոտիկի դիսկ Ցիպրոֆլօքսացին | լրակազմ | 11 | 1,920 | 21,120 | 11 |
| 21 | 33691420/240 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ | Հակաբիոտիկի դիսկ Էրիթրոմիցին | լրակազմ | 1 | 1,920 | 1,920 | 1 |
| 22 | 33691420/249 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ | Հակաբիոտիկի դիսկ Լինկոմիցին | լրակազմ | 1 | 1,920 | 1,920 | 1 |
| 26 | 33691420/260 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ | Հակաբիոտիկի դիսկ Նալիդիքսաթթու Nalidix/ Acide | լրակազմ | 3 | 1,920 | 5,760 | 3 |
| 27 | 33691420/261 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ | Հակաբիոտիկի դիսկ Ֆլյուկոնազոլ | լրակազմ | 3 | 1,920 | 5,760 | 3 |
| 28 | 33691420/267 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ | Հակաբիոտիկի դիսկ Նիստատին | լրակազմ | 3 | 1,920 | 5,760 | 3 |
| 29 | 33691420/268 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ | Հակաբիոտիկի դիսկ Կետոկոնազոլ | լրակազմ | 3 | 1,920 | 5,760 | 3 |
| 30 | 33691420/236 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ | Հակաբիոտիկի դիսկ Կլոտրիմազոլ | լրակազմ | 3 | 1,920 | 5,760 | 3 |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Լ. ՕՀԱՆՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ տնօրեն

Բ. ԹԱՊԵՎՈՍՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-23-9/10-9 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Գնման առարկայի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| չ/հ | CPV կոդը | CPV անվանումը | անվանումը | չ/մ | քանակը | միավորի գինը (ՀՀ դրամ) | ընդհանուր գումարը (ՀՀ դրամ) | վճարումը նախատեսվում է իրականացնել 2023թ., համապատասխան եռամսյակների, այդ թվում՝ | |
| | | | | | | | | երրորդ եռամսյակ | չորրորդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 11.12.2023թ. |
| 16 | 33691420/257 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ | Հակաբիոտիկի դիսկ Ցիպրոֆլօքսացին | լրակազմ | 11 | 1,920 | 21,120 | 21,120 | 21,120 |
| 21 | 33691420/240 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ | Հակաբիոտիկի դիսկ Էրիթրոմիցին | լրակազմ | 1 | 1,920 | 1,920 | 1,920 | 1,920 |
| 22 | 33691420/249 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ | Հակաբիոտիկի դիսկ Լինկոմիցին | լրակազմ | 1 | 1,920 | 1,920 | 1,920 | 1,920 |
| 26 | 33691420/260 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ | Հակաբիոտիկի դիսկ Նիհգրամոն Nalidix/ Acide | լրակազմ | 3 | 1,920 | 5,760 | 5,760 | 5,760 |
| 27 | 33691420/261 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ | Հակաբիոտիկի դիսկ Ֆյուկոնազոլ | լրակազմ | 3 | 1,920 | 5,760 | 5,760 | 5,760 |
| 28 | 33691420/267 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ | Հակաբիոտիկի դիսկ Նիստատին | լրակազմ | 3 | 1,920 | 5,760 | 5,760 | 5,760 |
| 29 | 33691420/268 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ | Հակաբիոտիկի դիսկ Կետոկոնազոլ | լրակազմ | 3 | 1,920 | 5,760 | 5,760 | 5,760 |
| 30 | 33691420/236 | լաբորատոր ազդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ | Հակաբիոտիկի դիսկ Կլոտրիմազոլ | լրակազմ | 3 | 1,920 | 5,760 | 5,760 | 5,760 |
| Ընդամենը | | | | | | | 53,760 | | |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ տնօրեն

Բ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ